ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 25 ապրիլի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Ա. Գյուլումյանի

Ա. Թունյանի

Քննության առնելով Վաեպուրակ Հարությունյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Վասպուրակ Հարությունյանը 06.04.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «…վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար» արտահայտությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողը նշում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը չի կարող վճռաբեկ բողոքի մերժման հիմքում դնել մի հանգամանք, որին պետք է գնահատական տա գործի ըստ էության քննության ժամանակ, ավելին՝ ստացվում է, որ եթե ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը նոր երևան եկած հանգամանքի հիմքով ընդունում է վարույթ, ապա որպես նոր երևան եկած վկայակոչված հանգամանքներն իսկապես առկա են:

3. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց.

դիմողը ՎՏԲ-Հայաստան բանկի հետ գործարքն անվավեր ճանաչելու հայցադիմում է ներկայացրել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որը 2014 թվականի նոյեմբերի 27-ի վճռով բավարարվել է:

ՎՏԲ-Հայաստան բանկը բողոքարկել է այդ ակտը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում, որն էլ 2015 թվականի հունիսի 25-ի որոշմամբ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի նոյեմբերի 27-ի վճիռը բեկանել է և փոփոխել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2015 թվականի հունիսի 25-ի որոշման դեմ դիմողը վճռաբեկ բողոք է տարել ՀՀ վճռաբեկ դատարան, որն էլ 2015 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

Դիմողը կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել նոր երևան եկած հանգամանքի հիմքով: ՀՀ վճռաբեկ դատարանը 2016 թվականի սեպտեմբերի 28-ի որոշմամբ մերժել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը, քանի որ բողոք բերած անձը չի ապացուցել և հիմնավորել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.32-րդ հոդվածի որևէ կետով սահմանված նոր երևան եկած հանգամանքի առկայությունը:

Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը ձևականորեն է բարձրացրել նոր երևան եկած հանգամանքի խնդիր, քանի որ դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի բողոքում նշված հիմքը ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 204.32-րդ հոդվածի իմաստով չի հանդիսանում նոր երևան եկած հանգամանք և դիմողի համար ՀՀ սահմանադրական դատարան դիմելու ժամկետն սկսում է հոսել ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի օգոստոսի 26-ի որոշումն հասանելի լինելու պահից: Այսինքն՝ դիմողը բաց է թողել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված 6-ամսյա ժամկետը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

ì ³ëåáõñ³Ï Ð³ñáõÃÛáõÝյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

25 ապրիլի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-9